

Աւետարանի մէջ իրարմէ կ'որոշուին «շահմարանք եւ համբարանոցք» (Ղկ. ԺԲ, 24), որոց առաջինն ընդհանուր իմաստ ունի. եւ երկրորդն՝ արմտեաց յատուկ վայրն է, որ կը կոչուի նաեւ համբարք (Մանդ. 111. Բ Օր. ԻԸ, 5), կամ ստրարք (Խոր. 27. Ա Մնց. ԻԸ, 12), նման պրս. ստրար հոմանշին (Հիւրշ. 178): Շտեմարանին հետ համիմաստ է նաեւ մրկրանոցք (Խոր. 257)՝ կամ մրերք (Ա Մնց. ԻԸ, 12): — Այս օրինակաց մէջ արմատական բառերն իսկապէս պարունակեալ են՝ գործածուած փոխանակ պարունակողի: Եւ արդարեւ շատ տեղ համբարք՝ պաշարը կը նշանակէ (Փաււ. 129. Բ Մնց. ԺԱ, 11 եւն). ինչպէս եւ «զստրարս ցորենոյ» կամ «զհամբարանոցս համբարոք հանդերձ» (Որբ. 141, 22), որոց հոմանիշ է եւ մրերք (Յոր, Ի, 21):

Յիշեալ բոլոր բառից յոգնականածեւ գործածութիւնը պերճօրէն ցոյց կու տայ միանգամայն եթէ շտեմարանաց եւ եթէ անոնց բովանդակած նիւթոց բազմաւորութիւնը, համաձայն Մանդակունւոյն վերոյիշեալ «բազում շինուածոց»:

2. — Մրերք: — Բնականապէս կը հետաքրքրէ զմեզ ասոր բովանդակութիւնը: Աւելորդ է ըսել՝ թէ հոս պիտի գտնենք